ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՇԱԲԱՆՅԱՆ
(1864-1949)

Արսեն Շաբանյանը հայ ու եվրոպական ծովանկարչության երևելի դեմքերից է: Նրա երկարատև ու բեղուն կյանքն անցել է օտար ափերում՝ Իտալիա, Ֆրանսիա, Բելգիա, Անգլիա, որտեղ նշանավոր վարպետների մոտ ստացել է մասնագիտական հիմնարար կրթություն, հետագայում՝ ցուցադրվել սալոններում ու պատկերասրահներում: Շաբանյանի աշխատանքների թիվը երևի թե հազարից անցնում է: Հայաստանում դրանք անհամեմատ քիչ են՝ Ազգային պատկերասրահում, Էջմիածնի Վեհարանի թանգարանում և, իհարկե, մասնավոր մեկ-երկու հավաքածուներում:

Հայաստանում գտնվող այդ փոքր քանակը, անշուշտ, դժվարացնում է տաղանդավոր ծովանկարչի արվեստի վերաբերյալ ամբողջական խոսք ասել: Եվ քանի որ Եվրոպայում բացված բազմաթիվ ցուցահանդեսների և աշխարհի տարբեր ծայրերում գտնվող նրա գործերի մասին իրենց բովանդակալից տողերը թողել են ականատես շատ արվեստագետներ ու արվեստը գնահատողներ, ուստի, նպատակահարմար գտանք ստորև Շաբանյանի կյանքի ու գործունեության հիմնական փուլերը, ըստ ժամանակագրության, համառոտ ներկայացնելուն զուգընթաց, պարբերաբար մեջ բերել նրա աշխատանքների մասին այդ հեղինակավոր մասնագետների բնութագրումները, որոնք ասվածն ավելի համոզիչ ու վստահելի են դարձնում:

Առեղծվածային է թվում նշանավոր մարդկանց կյանքը: Երբեմն ամենասովորական ու առօրյա դեպքերը հետաքրքրական և ուշագրավ են դառնում այն պատճառով միայն, որ դա նրանց՝ այդ երևելիների հետ է պատահել: Ինչպիսի պատմություններ են պահպանվել մեզանում Հ. Այվազովսկու, Վ. Սուրենյանցի, Մ. Սարյանի, Ե. Թադևոսյանի և մյուսների մասին. սակավադեպ անկանխատեսելի իրողություններ, զվարճալի կամ արտասովոր դեպքեր, կենցաղային հետաքրքրական մանրուքներ…

Եվ ահա՝ ճակատագրի հեգնանքը. երկար ու բարակ՝ ութսունհինգ տարի ապրած, բազմաթիվ ցուցահանդեսների ու միջոցառումների մասնակցած, շփվող ու կենսասեր Արսեն Շաբանյանի մասին շատ սուղ տեղեկություններ են պահպանվել:

Մեզ հայտնի են համառոտ փաստեր նրա անհատական և ընդհանուր բնույթի ցուցահանդեսների մի մասի մասնակցության, նաև մասնագետների հայտնած կարծիքներն ու գնահատականը դրանց մասին, իսկ անձնական կյանքից՝ սոսկ բնակության վայրերը, տեղաշարժերը... Ունեցել է որդի՝ Հերան (Շաբան) Շաբանյան (1887-1939), որը տաղանդավոր նկարիչ էր՝ հակված իմպրեսիոնիստական և կուբիստական ուղղություններին: Որպես գեղանկարիչ՝ ձևավորվել է Փարիզի գեղարվեստի դպրոցում: Գիտենք, որ Արսեն Շաբանյանն երիտասարդ տարիներին (1891 թ.) «Նա-

խիմով շոգենավը Բաթումիի ծովափում» հաջողված նկարը նվիրել է ռուսիո Մեծ իշխան Գեորգի Ալեքսանդրովիչին: Վերջինս չափազանց գոհ է մնացել այդ նկարից և իր հատուկ շնորհակալությունն է հղել նկարչին:

1864 թ. – Ծնվել է Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) գավառի Սունինց գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Արծնյան վարժարանում, որը հիմնադրվել էր 1811 թ. Կարապետ արքեպիսկոպոս Բազրատունու կողմից: Նկարչության առաջին դասերը ստացել է այդ վարժարանում:

1874 թ. – Մեկնում է Վենետիկ և ուսանում Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Այդ տարիներին հայկական նշանավոր վարժարանում նկարչություն առարկան դասավանդում էր ճանաչված գեղանկարիչ Անտոնիո Պաոլետտին, որը Մխիթարյան միաբանության բարեկամներից էր: Ընդհանուր ժամերից բացի Շաբանյանը մասնավոր դասեր է վերցնում Պաոլետտի մոտ: Ասենք, որ Պաոլետտիի նկարչության դասընթացներին են հաճախել հանրաճանաչ ծովանկարիչ Շառ (Կարապետ) Ադամյանը (1872-1947), օֆորտի սքանչելի վարպետ Էդգար (Շահինյան) Շահինը (1874-1947): (1905թ. «Անահիտ» N4 հանդեսից և 1905թ. «Մասիս» N3 շաբաթաթերթից տեղեկանում ենք, որ բացի Պաոլետտից, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում Ա. Շաբանյանին նկարչություն է դասավանդել նաև ժամանակի մեծանուն վարպետներից մեկը՝ Լուիջի Քերինան):

1883 թ. – Վերադարձ հայրենի Կարին: 1891-ին աշխատանքային գործերի բերումով տեղափոխվում է Բաթումի՝ ծառայելով առևտրական բանկի մի մասնաճյուղում: Շարունակում է զբաղվել նկարչությամբ: Ինչպես նշում է արվեստաբան Մ. Սարգսյանը. «Ազատ ժամերին նա երբեմն նվիրվում է նկարչությանը և ձգտում միայնությամբ բնությունը լավ ուսումնասիրել»:

1891 թ. օգոստոսին մեկնել է Թեոդոսիա՝ հյուրընկալվելով ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու մոտ: Որպես գեղանկարիչ՝ ստանում է Այվազովսկու օրհնությունը և անսալով հանճարեղ ծերունու խորհրդին՝ որոշում է մեկնել աշխարհի արվեստների մայրաքաղաք Փարիզ՝ նկարչության մարզում կատարելագործվելու համար: Ընդհանրապես Հ. Այվազովսկու հետ հանդիպումը վճռական նշանակություն է ունեցել նրա մասնագիտական ուղին վերջնականապես որոշելու համար:

Փարիզ. դասառություն Գյուստավ Մորոյի արվեստանոցում, այնուհետև՝ Ժյուլիեն ակադեմիա՝ երևելի մանկավարժ-նկարիչներ Ժան Պոլ Լորանսի և Բենժամին Կոստանի դասարաններում: Պրոֆեսիոնալ նկարչի կայացումը. գիտելիքների յուրացման հետ մեկտեղ անհատական նախասիրությունների ձևավորում: Իրեն հավասարապես դրսևորում է տարբեր ժանրերում՝ բնանկար, կենցաղ, նատյուրմորտ, դիմանկար (ի դեպ, մեզ հաջողվել է պարզել Ա. Շաբանյանի բնորդուհու ինքնությունը՝ Վիզավոնա Ֆրանսուա Անտուան): Դեռևս ուսանողական տարիներին Շաբանյանը հետաքրքրվում է նաև գրաֆիկայով՝ ստեղծելով օֆորտի մի քանի տպավորիչ աշխատանքներ: Ժյուլիեն ակադեմիայից հետո, ինչպես նկատում է Ռ. Շիշմանյանը. «Շաբանյանը այս վարպետներից ոչ մեկի ընտրած նյութերին չընտելացավ ու չուզեց գնալ նույն ճանապարհով. այլ նրանց մոտ իր վրձնի տեխնիկան ճկունացնելուց և հարստացնելուց հետո վերադարձավ դեպի կենդանի բնությունը, դեպի նրա ծովային միջավայրը, որի հանդեպ զգացած խոր սերը արևելքից էր ստացել» (Ռ. Շիշմանյան, Բնանկարն ու հայ

նկարչները, Երևան, 1958 թ.):

Փարիզում եղած առաջին տարիներից, երբ դեռ աշակերտում էր Ժան Պոլ Լորանսին և Բենժամին Կոստանին «Ամեն տարի պ. Շաբանյանը մի քանի ամիս ապրում էր Բրետանում՝ օվկիանոսի եզերքներին, ուր մեծ մասամբ ներշնչվում է իր նկարների նախագաղափարներով: Փոթորիկները, ծովի հանդարտությունը, մակընթացությունն ու տեղատվությունը, մրրիկները, թռչունների թռիչքը, բնության այս նկարչական վայրերում առաջ բերած ոգևորությունները նրա վրձինը մեր առաջն է դնում լիակատար ճշմարտությամբ» (Օգուստ Բենար, «Մշակ», Թիֆլիս, 1902 թ., N125):

Շաբանյանը շրջում է Ֆրանսիայի բոլոր շրջաններում՝ ծովեզրյա Բրետան, Վանդե, ապա Ֆրանսիայի հարավ և ամենուր ուսումնասիրելով ծովի կախարդական գաղտնիքները՝ ստեղծում է մեկը մյուսին չզիջող բազմաթիվ ծովանկարներ:

1894 թ. - Առաջին ցուցահանդեսը Ֆրանսիայի արվեստագետների սալոնում: «Բրետան կատարած ճանապարհորդության ընթացքում Շաբանյանը ստեղծում է բազմաթիվ ծովանկարներ, որոնք նա ուղարկում է Ֆրանսիայի արվեստագետների սալոնին: Դրանք անմիջապես իրարանցում են առաջացնում, և ամբողջ մամուլը ոգողվում է «ծովի և լույսի» նկարչի մասին գովասանքի խոսքերով, քանզի Շաբանյանն այնտեղ ցույց է տալիս արդեն կայացած իր տեսակետը, որին նա հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջին օրերը»: (Onnig Avedissian, Peintres et sculpteurs Armeniens, le Caire, 1959):

Ճանապարհորդություններ Իտալիա, Բելգիա, Հոլանդիա, Անգլիա: Նկարչին գերում են դաշտերի ու սարերի, գետերի ու ծովերի աստվածաստեղծ գեղեցկությունը: «Շապանեան աշխատանոցի մթնոլորտը շատ չէր սիրեր: Բաց օդը, բնութիւնը և մանավանդ ծովը իր վրայ կախարդող կամ ձգիչ ոյժ մը ունէին... Այս նկարները անմիջապէս մեծ շահագրգռութիւն կը ստեղծեն և ֆրանսական մամուլը այս «լոյսի և ծովու» նկարիչին մասին՝ խօսիլ կը սկսի» (Հայր Արիստակէս վարդապետ Պօհճալեան, Ակնարկ մը հայ նկարչութեան վրայ, Վիեննա, 1989 թ.):

1896 թ. - «Պարոն Շաբանյան, որը երեք տարի ի վեր Շանզ-Էլիզեի սալոնին մեջ կցուցադրե ծովանկարներ, այս տարի ալ ուներ «Ծովի վրայ լուսնի ծագումը» հիանալի կտավը ... Մեծ հաջողություն է ունեցել» («Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1896 թ., N7, «Արևելք», Պոլիս, 1896 թ., հունիս 4):

1898 թ. - «L'Armenie» - ին մեջ (թիվ 12) կարդում ենք, թե Արսեն Շաբանյան կարնեցի հայ նկարիչը ցուցադրվել է «Ժորժ Պրտիի» պատկերասրահում՝ իր մի քանի նշանավոր նկարներով: Խուռն բազմությամբ այնտեղ այցելած տարբեր ազգերի արվեստագետները զմայլվել են նրա նկարներով և մեծապես շնորհավորել կարնեցի անխոնջ արվեստագետին իր այս նոր հաջողության համար:

Շաբանյանը ցուցադրել է իր նկարներից 60-ը: Դրանցից հատկապես հիշատակման են արժանի «Պան-Շատոյի եզերքները», «Գիշերը օվկիանոսի վրա», «Երեկոյան վերջալույս», «Փոթորիկի գալուստը» և լուսնկային մի քանի նկարներ («Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1899 թ., N12):

1900 թ. - Աշխատանքների ցուցադրումը Փարիզի «Ժորժ Պրտիի» սրահում: Այդ ցուցահանդեսի կապակցությամբ ֆրանսիական «Le Journal des Arts» հանդեսը արձագանքում է. «… Որքան հզոր ու փափուկ արվեստով նկարիչը կարողացել է ծովը ներ-

կայացնել իր հանդարտության տեսիլքների մեջ, որքան տպավորությամբ զանազանված է այն և որքան պարզությամբ կատարված»:

Նույն թվականին՝ մասնակցություն Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի ռուսական բաժնում Հովհաննես Այվազովսկու և Գևորգ Բաշինջաղյանի հետ: Ներկայացվել են «Ծովափ» և «Ծովանկար լուսնակ գիշերով» կտավները: Այդ առթիվ ֆրանսիական «Ժուռնալ դեզառը» գրում է. «Շաբանյանը հետևում է բնությանը. նկատվում է, որ նա ընդերկար զննել է իր սիրած տարրը, ծովը թե՛ արշալույսին, թե՛ վերջալույսին և թե՛ լուսնի լույսով: Ջանացել է ըմբռնել նրա բոլոր վսեմ շարժումները իրենց տարբեր երևույթներում: Այդ երկար զննությանց մեջ նա կրել է հեղուկ տարրի հոյակապ մեծության ազդեցությունը...» (Ռ. Շիշմանյան, նշված աշխ.):

Շաբանյանը դառնում է Փարիզի «Ծովային նկարիչների ընկերության» հիմնադիրներից մեկը:

Նա պարբերաբար մասնակցում է տարբեր արվեստների և գրականության խմբավորումներին, որոնք կազմակերպվում էին թե՛ Ֆրանսիայում և թե՛ այլ երկրներում:

Այդ շրջանի աշխատանքներից «Նորմանդացի ձկնորսները» կտավը (1898 թ.) գրեթե կանխագծում է Շաբանյանի նախասիրած ապագա կոլորիտը, որով նա տարբերվելու էր հայ մյուս ծովանկարիչներից: «Շաբանյանի վաղ շրջանի աշխատանքները,- գրում է արվեստաբան Շահեն Խաչատրյանը,- կատարված են իմպրեսիոնիստական տպավորությամբ: Ավելի ուշ նրա ստեղծագործություններում գերակշռում է բանաստեղծական երազկոտ տրամադրությունը: Նա հաճախ և սիրով է պատկերում արևամուտը ծովի վրա, լուսնյակ գիշերներ ... նայելով Շաբանյանի կտավները՝ զգում ես նկարչի ռոմանտիկ անկեղծ փայլատակումը և կիսում նրա հիացմունքը ալիքների վրա արևի լույսի խաղերի ցոլքի և հորիզոնի մշուշում թաքնվող արևամուտի գեղեցկությունը» (Ш. Хачатрян, Айвазовский, Известный и неизвестный, Самара, 2000 г.):

Եվ, իրոք, իր գործերում նկարչական լույսի օգտագործման բնորոշ առանձնահատկությունները գալիս են իմպրեսիոնիստական գործելակերպի հասկացողությունից, որը Շաբանյանը յուրացրել և վարպետորեն կիրառում էր: Զգացվում է նկարչի նուրբ դիտողականությունը, օդային հեռանկարի զգացողականությունը, գույնի և լույսի իմաստավորված հակադրումների ստեղծումը: «Ջրի մակերեսին ծփացող լուսնի արծաթավարդ ցոլքերի կենդանի տպավորությունը Շաբանյանը ձեռք էր բերում ոչ թե սև ու սպիտակ բիրտ հակադրությունների օգտագործմամբ, այլ պայծառ նրբերանգների միջոցով, որոնց գունային թարմությունները, նպատակահարմար կերպով համադրված, լույսի թրթռացման զգացումն են հաղորդում դիտողին» (Ռ. Շիշմանյան, նշված աշխ.):

«Շապանեան և Բաշինջաղեան Փարիսի մեջ. Փարիսահայ լրագրաց մեջ ուրախութեամբ կը կարդանք երկու հիշեալ հայ արուեստագիտաց ուղղուած համակրելի տողերը: Ուրախալի երեւոյթ մըն է, որ այս վերջին տարիներս հայ արուեստագետք՝ իրենց եվրոպացի արուեստակիցներեն բարի օրինակ առնելով եւ քաջալերուելով ծախք եւ աշխատութիւն չեն խնայում իրենց ձեռաց դյութած արուեստակերտներն՝ ի ցոյց դնելու: Բաշինջաղեանը և Շապանեանը երկու հայ նկարիչներն ալ այս տարի Փարիսի մէջ իրենց նկարներէն բաւական քանակութեամբ ի տես դրած են այլ եւ այլ սրահներու մէջ: Իրենց ի Փարիս գտած ընդունելութիւնն այս քայլն եւ աշխատութիւնն

լիով վարձատրեց: Ֆրասեական լրագիրներն համակրանօք եւ գովութեամբ խօսեցան իրենց նկարներուն վրա, մեծապէս գնահատելով զանոնք… Շապանեան մեծաւ մասամբ ծովանկարներ ցուցադրած է» («Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1900թ., N4. արձագանքում են նաև «Անահիտ», Փարիզ, 1900թ., N3, «L'Armenie», Փարիզ, 1900թ., N4):

Ի դեպ, 1901 թ. Փարիզի նկարիչների տարեկան ցուցահանդեսի առթիվ «Մշակ» 1901 թ. N17-ից տեղեկանում ենք, որ այդտեղ բացի Ա. Շաբանյանից, ներկայացված են եղել նաև Շահինի, Զաքարյանի, Թերլեմեզյանի, Գրիգորյանի, Տիրանյանի և Գևորգյանի կտավները:

1902 թ. – Շաբանյանը արժանանում է ֆրանսիական ակադեմիայի սպայի տիտղոսին:

Շաբանյանը օֆորտի մեծ վարպետ. Ուսանողական տարիներից օֆորտով հրապուրված Շաբանյանը պրպտումների ընթացքում ավելի ու ավելի է հմտանում այդ մարզում, առավել ևս՝ գունավոր օֆորտի: Ֆրանսիական հեղինակավոր «Իլյուստրացիոն» հանդեսը գրում է. «Պ. Շապանեան ամենեն ինքնատիպներեն մին է այն խուզարկուներուն մեջ որոնց կը պարտինք գունավոր փորագրութեան այն վերածնութիւնը» («Բազմավեպ», Վենետիկ, 1907 թ., N11):

Շաբանյանը կատարելապես տիրապետում էր օֆորտի տեխնիկային: «Դրանցից մի քանիսը կատարված են այնպիսի բարձր մակարդակով, որ գրեթե համազոր են նրա գեղանկարչական աշխատանքներին: Նա այդ մասնագիտությամբ այնքան է խորացել, որ կարողացել է ինքնուրույն տիրապետել գունավոր տեխնիկային՝ հանդիսանալով դրա հիմնադիրը Ֆրանսիայում...

Եվ դա էլ առիթ է հանդիսացել Փարիզում կազմակերպելու «Գունավոր փորագրության ընկերություն», որի հիմնադիրներից մեկը Շաբանյանն էր» (Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմությունը, Դ, Երևան, 1987 թ.):

Շաբանյանը օգտագործում է նկարչական տեխնիկայի ամենատարբեր միջոցները:

Ֆրանսիական կառավարությունը Փարիզի Լյուքսենբուրգի թանգարանի համար գնում է «Լուսնի լույսով» աշխատանքը, իսկ պետական այլ հաստատությունների համար՝ «Վերջալույսը Բրետանում», «Ալիք» և «Ծովախեցգետին որսացող կանայք» գործերը:

«Շաբանյանը ցույց է տալիս մի տաղանդ, որի երկու գլխավոր արժանիքներն են՝ եզակիությունն ու հմայքը: Սույն «Խեցգետին որսացող կանայք» նկարը, ուր լույսի նուրբ խաղերը վերլուծվել են ու թարգմանվել գերազանց փափկությամբ, լիովին հատկանշում են նրա արվեստը» («Իլյուստրացիոն», Փարիզ, 1907 թ.):

1905 թ. – Մեծ հաջողություն Փարիզի Ժորժ Պըտիի ցուցահանդեսում: «Արվեստագետի համար հանդգնություն է մենակ ներկայանալ հանրությանը և համարձակվել ցույց տալ ջանքերի և հետազոտությունների արդյունքը: Պարոն Արսեն Շաբանյանի գործերի ցուցադրությունը, որը տեղի ունեցավ այս պահին Ժորժ Փըթիի սրահի մեջ, նվիրագործումն է մի տաղանդի, որ գիտի ճշմարտությունն արտահայտել պարզ ու տպավորիչ լեզվով, ուր հաճախ բանաստեղծական սառույցը երազների ծնունդ է տալիս» (Ֆրեդերիկ Պաթայլ, «Լը ժուռնալ», 1905 թ., Փարիզ: Ասենք, որ սույն հանդեսում տպագրվում է նաև Ա. Շաբանյանի ինքնադիմանկարը):

«Ժորժ Փըթիի մօտ, ակնարկ մը նետեցէք՝ անցած ատեննիդ՝ Շապանեանի յօրի-



Ա. ՇԱԲԱՆՅԱՆ, ԾՈՎԱՓԻՆ
կտավ, յուղաներկ (54 x 65)

Ա. ՇԱԲԱՆՅԱՆ, ԿԱՄՈՒՐՋԻ ՄՈՏ. ԼՎԱՑՔ ԱՆՈՂ ԿԱՆԱՅՔ
կտավ, յուղաներկ

Ա. ՇԱԲԱՆՅԱՆ, ԾՈՎԱՆԿԱՐ
կտավ, յուղաներկ (54,5 x 52)

Ա. ՇԱԲԱՆՅԱՆ, ԱՓ
կտավ, յուղաներկ (39 x 48)

նած ծովի ուսումնասիրութեանց վրայ: Զանոնք գրեթէ ամէնքն ալ հրապուրիչ պիտի գտնէք եւ ամէնքն ճիշդ դիտուած, իրենց գոյնի «էֆէ» ներուն մէջ» (Թիեպո-Սիսոն, «Անահիտ», Փարիզ, 1905թ., N4):

«Նիւ Եօրք Հերըլտի փարիզեան տպագրութեան քննադատը կը գրէ. «Ժորժ Փըթիի» ցուցասրահներէն մէկուն մէջ, (ի դեպ, Շաբանյանը պարբերաբար կազմակերպել է անհատական ցուցահանդես և ավելի հաճախ մասնակցել որևէ ընդհանուր ցուցադրության (մեջբերումը Ա. Հ.)) Շապանեան համախմբած է իր գործերէն հարիւրի չափ, գրեթէ բոլորն ալ՝ ծովանկար: Անոնց մէջ ցոյց կուտայ ծովը իր բոլոր երեւոյթներուն տակ, բայց ամենէն հաճախ՝ ժպտուն ծովը» («Անահիտ», Փարիզ, 1905 թ. N4):

«Պետք է գնալ և տեսնել Ժորժ Պըտիի նկարչատան մեջ պարոն Արսեն Շաբանյանի յուղաներկ և կավճամատիտ (պաստել) աշխատանքների ցուցադրությունը. Ծովն ամբողջովին գրավել է այս արվեստագետին, որը սիրահարված է աղոթալույս առավոտներին, մելամաղձոտ երեկոներին, խավար անհունություններին: Պր. Շաբանյանին հաջողվել է շատ լավ արտահայտել ջրի երեսին խաղացած բանաստեղծությունը՝ նորածագ լուսնի կամ մայրամուտի արևի ճառագայթների տակ: Արշալույսի ու վերջալույսի բոլոր գունաշարը գտնվում է պր. Շաբանյանի նկարների մեջ» (Պոլ-Լուի Էրվիէ, «Լը՝ Փրէս», Փարիզ, 1905 թ.):

«Ժորժ Պըտիի» ցուցահանդեսի առթիվ Ֆրեդերիկ Պաթայլը գրում է. «Այս շատ գեղեցիկ ամբողջութեան մէջ, արուեստագէտը իր ինքնութիւնը ամրապէս հաստատած է. արուեստասէրները, անձամբ քննելով, համախոհ պիտի ըլլան մեր անկողմնակալ դատումին:

Պ. Շապանեան ստացած է շատ մը մրցանակներ ֆրանսայի եւ օտար երկիրներու մէջ. իր վերջին գործերէն մին, «Մայր մտնող արեւը», կառավարութենէն գնուեցաւ՝ Լիւքսանպուրկի մուսէոն դրուելու համար» (Ֆրեդերիկ Պաթայլ, «Անահիտ», Փարիզ, 1905 թ., N4):

Նույն՝ 1905 թ. ցուցահանդեսի կապակցությամբ ժամանակի նշանավոր մտավորականներից Ռընե Ս. Եզռուան իր փաղաքշական տողերն է ձգում. «Կապրե՛ն այդ նկարները, բնության հետ շփմամբ՝ քայլ առ քայլ հափշտակված: Դրանք բոլորն էլ տոգորված են լայնածավալ հորիզոնների մաքուր պայծառությամբ: Այս նկարները պետք է դիտեն այն անձինք, որոնց կյանքի լավագույն պահերը կապված են եղել ծովի հետ, որ այն ունկնդրելով, այն շնչելով, այն դիտելով զմայլվում են» (Ռընե Ս. Եզռուա, «Ժիլ Պլաս», Փարիզ, 1905 թ.):

«Ամեն նկարիչ, որը հմայվում է օվկիանոսների շքեղությամբ, դեռևս ծովանկարիչ չէ: Ծովանկարիչ լինելու համար պահանջվում են մասնավոր հատկանիշներ ... Պետք է նրա վրա ապրած լինես, հուզվես և այդ հուզմունքը կարողանաս վերծանել: Շաբանյանը վերը հիշատակված առանձնաշնորհ արվեստագետներից է: Նա ծովի մասնագետ է և ըմբռնում է նրա այլազան և անսովոր երևույթների խորքը: Շաբանյանն արժանի է արտակարգ ուշադրության թե՛ որպես գեղանկարիչ և թե՛ իբրև գունավոր օֆորտի վարպետ: Նրա օֆորտային փորագրությունները կարող են համարվել քսաներորդ դարի գեղեցկագույն աշխատանքներ» (Ռոժե Միլե, Տե՛ս Հայր Արիստակէս վրդ. Պոհճալեան, նշված աշխ.):

«Շաբանյանը ծովը դիտում էր առհասարակ խաղաղ մթնոլորտի տպավորության

ներքո, որովհետև նրա հատկապես լուսնկա-լույս տեսարանների բացահայտած լիրիկական թովչությունը չէր կարող հաշտվել ծովի ալեկոծ մակերեսի հետ....» (Ռ. Շիշմանյան, նշված աշխ.):

Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Շաբանյանը անհատական ցուցահանդեսներ է ունեցել Ալեքսանդրիայում և Կահիրեում:

1907 թ. աշնանը Փարիզի «Իլյուստրացիոն» պատկերազարդ հանդեսը գունավոր տպագրում է Շաբանյանի «Խեցգետին որսացող կանայք» (այն գնվեց Փարիզի Լյուքսենբուրգի թանգարանի համար) նկարը հետևյալ մակագրությամբ. «Շաբանյանի «Խեցգետին որսացող կանայք» նկարը ամբողջապես բաղկացած է նրբերանգներից... ծով, որի վրա, որպես շողշողուն սատափյա մակերեսի, խաղում է բարձրից ընկնող մեծ լույսը, ու զայրույթի այնքան պատրաստ այդ անհունի վրա երևում են սիլուետները կորովի աշխատավոր կանանց, որոնք կապված ծանր և ապերախտ գործիքին, որպես թշվառ ուրվականներ, կարող են կատաղի քամու առաջին շնչից գալարվել ու ծուխի նման ցնդել»: («Իլյուստրացիոն», Փարիզ, 1907 թ.: Տե՛ս Ռ. Շիշմանյան, նշված աշխ.):

«Արսեն Շաբանյանի լավագույն գործերում բնությունը ներկայացված է ծովի աշխատավորի առկայությամբ: Այս պարագան նրա կտավները դուրս է բերում բնանկարի շրջանակներից, բացահայտում նկարչի իրականության առավել խոր ընկալումը: «Խեցգետին որսացող կանայք» պատկերում, օրինակ, ծովն ակոսող թափանցիկ լույսի մեջ տպավորիչ են պատկերված դժվար աշխատանքի լծված կանայք» (Շահեն Խաչատրյան, Ֆրանսահայ կերպարվեստ, Երևան, 1991 թ.):

«Իրարայաջորդ շատ մը տարիներ Շաբանեան Ճաբոնի ֆրանսական ցուցահանդէսներուն իր բաժինը բերաւ: Ասկէ զատ, ան իր անձնական ու կարեւոր ցուցահանդէսները կազմակերպեց Լոնտոնի ու Եգիպտոսի մէջ, ամէն կողմ մեծ յաջողութիւն արձանագրելով» (Հայր Արիստակէս Պօհճալեան, նշված աշխ.):

1910 թ. – Մասնակցություն Բրյուսելի գեղանկարչության և քանդակագործության միջազգային ցուցահանդեսին: Լայն արձագանք մամուլում:

Նույն թվականին ֆրանսիական կառավարությունը Ա. Շաբանյանին պարգևատրում է «Պատվո լեգեոն» շքանշանով:

1913 թ. – Շաբանյանը ցուցադրվում է Փարիզի Գեղարվեստական սալոնում: Այնտեղ ներկայացնում է «Ժայռերին բախվող ալիքները» աշխատանքը, որով և առանձնանում է այդ սալոնում ցուցադրվող շատ նկարիչներից:

1913 թ. - Անհատական ցուցահանդես Փարիզում: Ներկայացվում են նաև նախորդ տարիներին արված մի շարք գործեր: Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվում պահվում է այդ ցուցահանդեսի կատալոգը, որից և տեղեկանում ենք, որ ցուցադրվել է հիսունվեց աշխատանք, դրանցից տասնչորսը՝ յուղանկար, մյուսները՝ կավճանկար: Շաբանյանի ծովանկարները, ինչպես նաև դաշտային բնանկարներն ու ծաղիկները կատարված են քնարական ու հոգեկան խաղաղ տրամադրությամբ:

Դիպուկ է նկատում արվեստաբան Կ. Կուրղինյանը. «Ա. Շաբանյանի արվեստի հիմնական հատկանիշը օբյեկտիվ իրականության և իդեալների օրգանական սինթեզն է. նկարչի խոհերն ու ապրումները կարծես ածանցված են իրականությունից, իսկ բնությունն իմաստավորված է նրա խոհերով և զգացմունքներով: Բնությունը

նրա համար սոսկ նկարչագեղ բնորդ չէ, այլ տիպական ընդհանրացված կերպար» (Կ. Կուրղինյան, «Սովետական Հայաստան» 1964 թ., N12):

Ռ. Շիշմանյանի «Էդգար Շահին» (Երևան, 1956 թ.) մենագրությունից տեղեկանում ենք, որ 1916 թ. հունիսի 18-ին համաշխարհային պատերազմի հետևանքով տուժած «Ֆրանսիացի արվեստագետներին օժանդակող հոգատար կոմիտեի» ձեռնարկների օգտին տեղի է ունեցել մի վիճակախաղ, որի համար գործեր էին նվիրել փարիզաբնակ տասներկու հայ արվեստագետները՝ Զ. Զաքարյան, Է. Շահին, Բաբայան - Գարբոնե, Տիգրան Փոլադ, Հ. Ալխազյան, Տեր-Մարուքյան, Կ. Ադամյան, Տիգրան Եսայան, Ռ. Շիշմանյան, Շ. Երիցյան, Տիգրան Կարապետյան և իհարկե Ա. Շաբանյան, իր մեկ կավճամատիտ և գունավոր փորագրության աշխատանքով:

1917 թ. – Փարիզ, անհատական ցուցահանդես: Լայն արձագանք թե՛ ֆրանսիական և թե՛ ֆրանսիահայ մամուլում: «Հայ Քրոնիկոն» վերտառության տակ կարդում ենք. «1917-ին Փարիզ-փայլուն հաջողությամբ մը պսակված է Շապանյան Արսենի կազմած ցուցահանդեսը, որուն ծովանկարներեն և այլ գործերեն շատերը գնվեր են ֆրանսիական արվեստասերներու կողմե: Իսկ իր կարեւոր նկարներեն մին Ֆրանսիական կառավարությունը գնել է Լյուքսեմպուրկի թանգարանին համար» («Ամենուն տարեցույց», Պոլիս, 1916-20 թթ.):

Ի դեպ, Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվում պահվում է ֆրանսերենով տպագրված պաշտոնական մի փաստաթուղթ, որից և տեղեկանում ենք, որ 1917 թ. ֆրանսիական կառավարությունը Փարիզի Լյուքսենբուրգի թանգարանի համար Շաբանյանից գնել է «Լիալուսին» և «Ծովանկար» գործերը:

Անհատական ցուցահանդես Լոնդոնում. «Լոնդոնում կազմակերպած ցուցահանդեսի առիթով, անգլիական «Ստուդիո» հանդեսը տաղանդավոր արվեստագետին նվիրել է բազմաթիվ հոդվածներ» (Ե. Մարտիկյան, նշված աշխ.):

«Լոնտոնի «Սթիւտիօ»-ն անոր կը նուիրէ բազմաթիւ յօդուածներ եւ անոր արժէքաւոր գործերէն բաւական թիւով պաստառներ կը վերարտադրէ» (Հայր Արիստակէս Պօհճալեան, նշված աշխ.):

Շաբանյանի՝ Լոնդոնում կազմակերպած ցուցահանդեսի ժամանակ արքայադուստր Թեքի և Անգլիայի թագավորի զարմուհու կողմից գնվել է նկարչի «Խեցգետին որսացող կանայք» նկարը: (Ասենք, որ Շաբանյանը բազմիցս է անդրադարձել այդ թեմային թե՛ կտավի վրա և թե՛ գունավոր փորագրությամբ):

Օրեցօր մեծանում էր նկարչի ճանաչումն ու համբավը: Ֆրանսիական կառավարությունը համաշխարհային խաղաղության պայմանագրի համար պատվավոր ալբոմ է նվիրում ԱՄՆ նախագահ Թ. Վիլսոնին: Ալբոմում վերատպվում են Ֆրանսիայի հիսուն լավագույն նկարիչների գեղանկարչական աշխատանքները, որոնց մեջ իր տեղն է գտնում Շաբանյանի ջրաներկ մեկ աշխատանքի վերատպությունը:

1920 թ. - Անհատական ցուցահանդես Փարիզի «Ռյու դե Սեզ» սրահում: Տասնհինգ օր շարունակ Փարիզի արվեստասեր հասարակայնությունը ըմբոշխնել է տաղանդավոր ծովանկարչի արարումները:

1923 թ. Փարիզի Մեծ պալատի մեջ բացված տարեկան սալոնում ցուցադրվում են Ա. Շաբանյանը, Կ. Ադամյանը, Հ. Ալխազյանը, Վ. Մախոխյանը, Է. Շահինը և Հ. Փուշմանը:

1926 թ. – Փարիզի Ժորժ Պլտիի պատկերասրահում կազմակերպվում է Շաբանյանի աշխատանքների հերթական ցուցահանդեսը: Այն լայն արձագանք գտավ Ֆրանսիայի ու եվրոպական հարևան երկրների մամուլի և արվեստասեր հասարակայնության շրջանում: Հեղինակավոր «Ֆիգարոյից» մինչև մասնագիտական բնույթ ունեցող «Տան» թերթը իրենց առաջնային էջերը հատկացրին ցուցահանդեսի լուսաբանմանը. մեկնաբանություններով հանդես են գալիս ֆրանսիացի երևելի արվեստաբաններ, մասնավորապես Թիեպո Սիսոն «Տան» օրաթերթում և Արսեն Ալեքսանդրը «Ֆիգարոյում» նշում են, որ Արսեն Շաբանյանը նոր շրջանի եվրոպական առաջին ծովանկարիչն է:

«... Վաղուց գիտենք, թե ինչպիսի վառ տաղանդ ունի Արսեն Շաբանյանը, թե որքան հարատև աշխատող է նա՝ իր անհագ տեսությանը ընծայելով մշտանորոգ սնունդ.. իր նպատակը եղել է մեզ ապացուցել, որ ծաղիկը ապրող էակ է և այն մտածողի համար ունի խորհուրդի նշանակություն, որն իր հոգին մեզ է հայտնում մերթ շողշողուն, մերթ քնքուշ գեղեցկությամբ: Վարդերն իրեն հայթայթեցին ընդարձակ ստեղնարան ներդաշնակության, որոնք ճշմարիտ կախարդանքներ են: Այդտեղ տեսնում ենք մանրավարդերի գրկաչափ մի փունջ, որոնք մեզ երազել են տալիս... Շաբանյանը գիտե տալ իր ծաղիկներին ուշադրություն, որով մենք պարտավոր ենք թափանցել նրա բարբնուկի մեջ…

Արսեն Շաբանյան մեզ կներկայացնե իր գեղարվեստական շքեղ գործով՝ ընդհանրապես յուղանկարներ ու կավճանկարներ. այնտեղ կտեսնենք ծովի և խարակի տեսարաններ, լճակի ափեր, Վենետիկի անկյուններ, այն ինքն կարտահայտի իր գույնի զորությամբ և զգայության փափկությամբ, իր հուզումի անկեղծությամբ ու ճշգրիտ շեշտով, որ մեզ կվկայի, թե ինքը ճշգրտորեն կպատկերացնե իր տեսածը... Շաբանյանի գույնը, լինի յուղազանգ, թե երփնամատիտ, միշտ փայլփլուն է ու զեղուն թավշյա զգվանքներով. իր գծագրությունը - զարմանալիորեն ճկուն է, իր հեռանկարը անսխալ ապահովությամբ հորինված: Մթնոլորտը սավառնում է ամենին վերև՝ լուսահեղձ թեթև ու օդային ... Շաբանյանը բնանկարիչ է իր խառնվածքով ու իր հավատքով. այսինքն՝ բնության վրա ունեցած իր հիացումը արդյունք է իր վրա ազդող մի ինքնատիպ տեսակի՝ միստիկական ուժի» (Լ. Ռոժե-Միլե, «Գեղունի», Վենետիկ, 1927 թ.):

Ռ. Շիշմանյանը գրում է. «Ցուցահանդեսը նշում էր Շաբանյանի արվեստի առաջընթացը: Նա առավել ևս լայնացրել էր իր աշխատելակերպը և նյութական կատարման էական խնդրում ձեռք էր բերել արտասովոր վարպետություն. այնտեղ երևում էր նույնպես նրա ստեղծագործական անկաշկանդ թափը: Նրա վարպետության ինքնուրույն կողմերը ամենից ավելի փայլուն կերպով ի հայտ են գալիս ծովանկարներում և մասնավորապես լուսնի լույսով դիտված ծովի տեսարաններում» (Ռ. Շիշմանյան, նշված աշխ.):

1929 թ. Ա. Շաբանյանն իր անհատական ցուցահանդեսն է կազմակերպում Մարսելում: Ծովանկարներից բացի նկարիչը ներկայացնում է բազմաթիվ բնանկարներ և ծաղիկներով նատյուրմորտներ: Գովեստներով արձագանքում է «La Vie Marseilleise» շաբաթաթերթը:

«Շապանեան նկարիչն է խաղաղ տեսիլներուն: Երբ կուզէ արտահայտել իրենց ցո-

ղուններէն անջատուած ծաղիկներու ուժգոյն ժպիտը կամ՝ ալիքներուն վրայ արեւուն հեւացող մնաք բարովը, իր զգայնութիւնը բնութեան զգայնութեան ու լռութեան գաղջ պահերուն միայն» (Գ. Սայապալեան, «Անահիտ», Փարիզ, 1929 թ., N1):

1926-1930 թթ. – Շաբանյանը պարբերաբար մասնակցել է հայ նկարիչների կազմակերպած «Անի» միության ցուցահանդեսներին:

1949 թ. Ա. Շաբանյանը իր մահկանացուն կնքեց Փարիզում:

Նկարչի աշխատանքները գտնվում են աշխարհի շատ թանգարաններում ու պատկերասրահներում: Դեռևս իր կենդանության օրոք «Լիալուսին» կտավը գնվել է Ռուսաստանի կայսրուհու կողմից, որը ցուցադրվել է կայսերական բակի թանգարանում: «Խեցգետին որսացող կանայք» աշխատանքը՝ Անգլիայի արքայադստեր կողմից: Նկարներ են գնվել Բեռլինի պոլիտեխնիկական ինստիտուտ-թանգարանի, Մյունխենի, Ֆիլադելֆիայի, Վաշինգտոնի, Նյու Յորքի, Բուենոս-Այրեսի, Լոնդոնի, Վենետիկի, Փարիզի, Տոկիոյի, Բրազիլիայի Պերնանբուս, Ալեքսանդրիայի Պինակոտեկ թանգարանի ու քաղաքապետարանի, Սիդնեյի Գեղեցիկ արվեստների և մի շարք այլ քաղաքների խոշոր ու փոքր թանգարանների համար: